

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությ ունը՝ 180 րոպե)

XI դասարան

Միրելի՛ մասնակից, օլիմպիադային մասնակցի՛ր հաղթելու կամքով, հաղթանակդ սրբագործի՛ր հայ գրականության նկատմամբ ունեցած հպարտության և խորին ակնածանքի զգացումով:

Հավատով՝ Ս. Աբազյան

1. Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման: Ո՞վ է եղել Վանահոր նախաստիպը, ո՞ր պատմիչներն են վկայություն թողել այդ քահանայի մասին: Ի՞նչ խորհրդանշաններ է գործածել Շանթը: Գրի՛ր քո խոհերը Աբեղայի վախճանի մասին: Գրի՛ր մեկ քառատող. Իջե՛ք, իջե՛ք, երազներ..... 5մ.

2. Ինչպե՞ս է բնութագրել Եղիշե Չարենցը Միսաք Մեծարենցին(գրի՛ր քառատողը): Վերլուծի՛ր հետևյալ բանաստեղծությունը, գրի՛ր վերնագիրը:

Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի, և համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար Երազներու պերճուհին է, որ կանցնի Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար: Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար, և ալիք մը թևը բացած կը վազե գրկել ափունքն իղձիս ոսկի ավազե:	Ո՞վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ ո՞վ պերճությունը գրնացքին իր հըպարտ ճամփուն վըրա՝ իր քայլերուն հետքը վարդ ուր հեշտորեն կը հաժի դեռ իմ մենիկ Միրտըս՝ բո՞ց մը՝ մըթնշաղին մեջ անհետ
	5մ.

3. Վերլուծի՛ր Հովհաննես Թումանյանի երկու քառյակ՝ քո ընտրությամբ: Ի՞նչ է քառյակը: Թումանյանի ասույթը քառյակի մասին: 5մ.

4. Ավետիք Բասիակյանի արձակը. ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը. «Օնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով»: Մեկնաբանի՛ր՝ ի՞նչ ես հասկանում: 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան